

ԲՌՀՉԱ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԼՈՒԲԱԼ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տարևիկ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի ասիստենտ

ԲՌՀՉԱ-ն (անգլ.՝ BRICS) հինգ զարգացող երկրների խումբ է, որոնց անդամ են Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը և ՀԱՀ-ը:

ԲՌՀՉ հապավումն առաջին անգամ 2001 թվականին առաջարկել է բիզնես վերլուծաբան Ջիմ Օ'Նիլը: 2011 թվականի փետրվարի 18-ին ՀԱՀ-ի միանալուց հետո Հնդկաստանի ֆինանսների նախարարի հայտարարությամբ խումբը սկսեց կրել ԲՌՀՉԱ անվանումը¹: Խմբի անվանումը ոչ միայն ապահովում է հնչեղություն, այլ նաև անվերելի է ԲՌՀՉԱ բառի տառադարձությունը շատ նման է անգլերեն bricks բառին, որը նշանակում է «աղյուս»: Այսպիսով տերմինն օգտագործվում է որպես երկրների մի խումբ, որոնց զարգացումը մեծապես կապահովի համաշխարհային տնտեսության աճը:

Փորձագետները չեն սպասում ԲՌՀՉԱ խմբի երկրների միջև տնտեսական համագործակցություն: Հատկապես չեն ենթադրում, որ ԲՌՀՉԱ-ի երկրները կձևավորեն մի տնտեսական միասնություն կամ պաշտոնական առևտրային ասոցիացիա: Սակայն ժամանակի ընթացքում երևաց, որ ԲՌՀՉ խմբի չորս երկրները փորձում են ստեղծել մի բաղաբանական ակումբ կամ խորհուրդ, և այդ կերպ իրենց զարգացող տնտեսական հզորությունը վերափոխել աշխարհաբաղաբանական ազդեցության: Այդ քայլերից էր 2008թ. Եկատերինբուրգում ԲՌՀՉԱ խմբի երկրների արտաքին գործերի նախարարների գագաթնաժողովը, ինչպես նաև Լույն երկրների առաջնորդների հանդիպումը 2009թ.:

ԲՌՀՉԱ-ի անդամ երկրները բնութագրվում են որպես արագ զարգացող հզոր երկրներ, որոնց բարենպաստ դիրքն ապահովում է համաշխարհային տնտեսության մեջ նրանց կարևոր դերը (տես՝ գծապատկեր 1): ԲՌՀՉԱ երկրներից Չինաստանն ունի արդյունաբերական արտադրանքի արտադրության հզորություններ, Բրազիլիան հարուստ է գյուղատնտեսական արտադրությամբ, Ռուսաստանը՝ հանքային, Հնդկաստանը՝ էժան մտավոր ռեսուրսներով, ՀԱՀ-ը՝ բնական ռեսուրսներով:

Համաձայն ՄԱԿ-ի գնահատականների, վերջին տարիներին, Չինաստանը դարձել է նաև աշխարհի խոշորագույն արտադրողը: Ավելացված արժեքի տվյալները արտացոլում են երկրի արդյունաբերական արտադրության իրական պատկերը (այսինքն, դրանք չեն ներառում միջանկյալ տվյալները և հումքի օգտագործումը): Այդ տվյալները միաժամանակ՝ վկայում են, որ Չինաստանը, որպես աշխարհի խոշորագույն արտադրող, 2006թ. անցել է ճապոնիայից, իսկ 2010թ.՝ Միացյալ Նահանգներից: 2015թ. Չինաստանի համախառն արդյունաբերական արտադրանքի ավելացված արժեքը 35.1%-ով գերազանցել է Միացյալ Նահանգների համապատասխան ցուցանիշին: Եվ չնայած 2014-2015թթ. Ռոուզակի անկմանը, այն շարունակում է մնալ առաջատար երկրների ցուցանիշներից ավելի բարձր մակարդակի վրա: Արդյունաբերական արտադրությունը խաղում է զգալիորեն ավելի կարևոր դեր չինական տնտեսության, քան ԱՄՆ-ի և ճապոնիայի տնտեսությունների համար: 2015թ. Չինաստանի համախառն արդյունաբերական արտադրանքի ավելացված արժեքը կազմել է ՀՆԱ 28,9%-ը, ԱՄՆ-ում՝ 12.1% -ը, ճապոնիայում՝ 18.7%-ը², իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը, ապա այն տիրապետում է ազգային հարստության այնպիսի տարրերի, որոնք շատ երկրներ չունեն: Դրանք են՝

- հզոր բնական ռեսուրսային բազա,
- նշանակալի արտադրողական ներուժ,
- նշանակալի գիտատեխնիկական ներուժ,
- առաջատար ունիկալ տեխնոլոգիաներ,
- բոլոր ոլորտներում բարձր որակավորված կադրեր:

Ռուսաստանի Դաշնության ավանդական առավելությունը ժամանակակից համաշխարհային տնտեսությունում նրա հանքային ռեսուրսների և հումքի հզոր քանակությունների տիրապետումն է: Ըստ որոշ գնահատականների, 21-րդ դարի սկզբին Ռուսաստանի Դաշնությանն է բաժին ընկնում ապատիտների համաշխարհային պաշարների 55%, բնական գազի՝ 28%, ալմաստի՝ 26%, նիկելի՝ 22%, կալիումական աղերի՝ 16%, պղնձի՝ 14%, նավթի և քարածխի՝ 12%-ը և այլն: Սակայն այս

¹ ՀԱՀ-ը պաշտոնապես միացավ ԲՌՀ-ին


² <http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx>

³ United Nations, *UNdata*, *Էլեկտրոնային ռեսուրս*՝ <http://data.un.org/Data.aspx?d=SNAAMA&f=grID%3a201%3bcurreID%3aUSD%3bpcFlag%3a0>

առավելությունների հետ մեկտեղ՝ Ռուսաստանի Դաշնությանը բնորոշ են որոշ թույլ կողմեր, որոնք խանգարում են նրա մրցակցային դիրքերին համաշխարհային տնտեսությունում: Այդ թույլ կողմերն են՝

- արտադրության պահպանվող բարձր ռեսուրսապահովվածությունն ու ծախսատարությունը,
- առաջատար երկրներից՝ արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի արտադրողականության մակարդակով հետ մնալը,
- ընդհանուր տեխնոլոգիական հետամնացությունը,
- արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում հիմնական արտադրական միջոցների մաշվածությունը,
- կապիտալի արտահոսքը
- Ռուսաստանի Դաշնության տարածաշրջանային անհավասարաչափ զարգացումը,
- ստվերային տնտեսության առկայության բավական բարձր տեսակարար կշիռը:

Գծապատկեր 1. ԲՈՒՅՎ երկրների ՀՆԱ դինամիկան՝ 2005-2015 թթ. (ԱՄՆ դոլլար)³



Հնդկաստանի ժամանակակից տնտեսությունը զարգանում է կառուցվածքային վերափոխումների և ներքին բազմաթիվ հիմնախնդիրների լուծման պայմաններում: Հնդկաստանը համաշխարհային տնտեսությունում գրավում է ինքնուրույն դիրքեր և ներգրավվում համաշխարհային տնտեսության գլոբալացման մեջ: Անկախության ձեռք բերումից հետո երկիրը զարգանում է շուկայական տնտեսության հիմքի վրա, իսկ օտարերկրյա կապիտալը ստեղծել է երկրի շուկայական տնտեսության կարևոր ենթակառուցվածքային մասը՝ երկաթգծեր, նավահանգիստներ և կապ: Ինչպես նաև թեյի արտադրությունն ու ապրանքային արտադրությունը՝ բամբակ, սուրճ, կաուչուկ: Հնդկական խոշոր քիմիկատը, մրցակցելով օտարերկրյա կապիտալի հետ, ստեղծեց տեքստիլ և թեթև արդյունաբերության մոնոպոլ արտադրություն:

Հնդկաստանում ևս, ինչպես մյուս զարգացող երկրներում, ստեղծվել են հատուկ տնտեսական գոտիներ, որոնք գործում են բաց շուկայի և մրցունակ տնտեսության սկզբունքով: Պետական հատկացումները բարձր տեխնոլոգիաների ոլորտում գլխավորապես իրականացվում են 3 հիմնական ուղղություններով՝

- պաշտպանություն,
- միջուկային հետազոտություն,
- տիեզերք:

Երկրում գործում են 35 պետական և 25 մասնավոր տեխնոպարկեր, որոնք ազատվել են ներմուծման հարկերից և ստացել են թույլտվություն 100%-ի օտարերկրյա կապիտալի մասնակցության:


Կայուն տնտեսական աճը տասնամյակների ընթացքում նպաստել է սրացող հարցերի լուծմանը, իսկ աղքատության հարթահարումն ու կյանքի որակի բարձրացումը եղել և մնում է 21-րդ դարի առաջնությունը:

Չինաստանը ԲՈՒՅՎ կառուցվածքի ամենաուժեղ տարրն է և օժտված է այդ խմբավորման տնտեսական և ֆինանսական բաղաբանականության ձևավորման մեծազույն ազդեցությամբ: Չինաստանը մեծ ջանքեր է գործադրում, որպեսզի հիև գ երկրների գործընկերությունը միայն դեկլարատիվ բնույթ չկրի և տա շոշափելի արդյունքներ: Ընդհանրապես, ԲՈՒՅՎ երկրներին միավորում է դրանց շահագրգռվածությունը Չինաստանի հետ համագործակցելու առումով: Չինաստանը ԲՈՒՅՎ երկրների համար կապող օղակ է, իսկ առևտրային հարաբերությունները մյուս չորս երկրների միջև շարունակում են մնալ բավականին ցածր մակարդակի վրա: Այսպես, ԲՈՒՅՎ երկրների կողմից իրականացվող առևտրի շուրջ 67%-ն իրականացվում է Չինաստանի կողմից, ինչը բացատրվում է նախ այն հանգամանքով, որ Չինաստանին բաժին է ընկնում ԲՈՒՅՎ երկրների

համախառն ՅՆԱ-ի 55%-ը, այն դեպքում, երբ Ռուսաստանին և ՅՆԱ-ին է ընկնում ՅՆԱ 13% և առևտրի 12%-ը: Ավելի փոքր մասնակցություն ունի Հարավաֆրիկյան Հանրապետությունը: Վերջինիս մասնակցությունը ԲՈՅՉԱ ՅՆԱ-ին կազմում է 2.8%, իսկ առևտրին՝ 2.6%: Բրազիլիայի դեպքում ցուցանիշները համապատասխանաբար 16% և 7% են: ԲՈՅՉԱ երկրների միջև իրականացվող առևտրի կառուցվածքում ևս առաջատար երկիրը Չինաստանն է: Երկրների միջև իրականացվող առևտրի մոտ 85%-ը: Չինաստանն իր գործընկերներից հիմնականում ստանում է բնական ռեսուրսները և արտահանում է պատրաստի արտադրանք (տես՝ գծապատկեր 2):

Գծապատկեր 2.

ԲՈՅՉԱ երկրների արտահանման ծավալները՝ 2010-2016թթ. (ԱՄՆ դոլլար)³



ԲՈՅՉԱ երկրների մրցունակության ինդեքսը 2016-2017թթ.⁴

Երկիրը	Համաշխարհային մրցունակության ինդեքսի ցուցանիշները												
	Ինստիտուտներ	Ենթակառուցվածք	Մակրոտնտեսական կայունություն	Առողջապահություն և տարրական կրթություն	Բարձրագույն կրթություն և մասնագիտական փորձ	Աարսնաբանական արդյունավետություն	Աշխատանքի շուկայի արդյունավետություն	Ֆինանսական շուկայի զարգացման մակարդակ	Տեխնոլոգիական մակարդակ	Շուկայի չափեր	Ընկերությունների մրցունակություն	Ինովացիոն ներուժ	Գլոբալ մրցունակության ինդեքս
Բրազիլիա	120 3.2	72 4.0	126 3.5	99 5.3	84 4.1	128 3.7	117 3.7	93 3.6	59 4.4	8 5.7	63 4.0	100 3.1	81 4.1
Ռուսաստան	88 3.6	35 4.9	91 4.3	62 5.9	32 5.1	87 4.2	49 4.4	108 3.4	62 4.3	6 5.9	72 3.8	56 3.4	59 4.7
ՅՆԱ	42 4.4	68 4.0	75 4.5	85 5.5	81 4.1	60 4.4	84 4.1	38 4.4	110 3.0	3 6.4	35 4.4	29 4.0	39 4.5
Չինաստան	30 5.3	45 4.3	42 4.7	8 6.2	41 6.2	54 4.6	56 4.4	39 4.5	56 4.2	74 4.0	1 7.0	30 4.0	28 5.0
Հարավային Աֆրիկա	40 4.5	64 4.2	79 4.5	123 4.3	77 4.2	28 4.8	97 3.9	11 5.2	49 4.7	30 4.9	30 4.5	35 3.8	47 4.5

³ <http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx>

⁴ The Global Competitiveness Report 2016-2017, World Economic Forum 2017, p. 95-396.

Ընդհանրապես, ԲՌՅԶԱ երկրները բավականին ծանրակշիռ դեր ունեն համաշխարհային առևտրի կառուցվածքում: Նրանց բաժին է ընկնում համաշխարհային առևտրի 16%-ը, իսկ անդամ երկրների միջև փոխադարձ ապրանքաշրջանառությունը կազմում է ավելի քան 300 մլրդ ԱՄՆ դոլլար: Փոխադարձ առևտրի ցուցանիշներն աճում են բավականին արագ տեմպերով, ինչը վկայում է, որ այս երկրներն արդյունավետ կերպով խորացնում են փոխադարձ կապերը: Ըստ որոշ գնահատականների, մինչև 2020թ. ԲՌՅԶԱ բոլոր երկրները կհայտնվեն աշխարհի առաջատարների շարքում՝ անցնելով Եվրամիությանը:

Հաջորդ ցուցանիշը, որով կարելի է գնահատել ԲՌՅԶԱ երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ դա մրցունակությունն է: Այս երկրների տնտեսական մրցունակության մակարդակները մոտ են իրար և դրանց ուղղված սպառնալիքներն ու մարտահրավերները հիմնականում նմանատիպ են: ԲՌՅԶԱ երկրներում մրցունակությանը խոչընդոտում են ինստիտուցիոնալ խնդիրները, ենթակառուցվածքների թույլ զարգացվածությունը, աշխատանքային ռեսուրսների ցածր որակը, առողջապահության և կրթության ոչ բավարար մակարդակը: Մինևույն ժամանակ այս երկրներին միավորում է մեծ ներքին շուկայի անկայությունը: Այս երկրներում անկա են նաև խնդիրներ՝ կապված տեխնոլոգիական զարգացվածության ոչ բավարար մակարդակի հետ (տես՝ աղյուսակը):

Ինչ վերաբերում է կլաստերներին, ապա այս երկրներում դրանք իրենց չափերով և քանակով բավական զիջում են ոչ միայն զարգացած, այլ նաև որոշ զարգացող երկրների: ԲՌՅԶԱ երկրների միջազգային մրցունակության ինդեքսը այսօր բավական ցածր է այլ երկրների համեմատ: Հարաբերականորեն բարձր դիրք է զբաղեցնում Չինաստանը և որոշ ինդեքսների ցուցանիշներով գերազանցում է ԱՄՆ-ին և Ճապոնիային:

Ինչ վերաբերում է գործունային պայմաններին, հարկ է նշել, որ ԲՌՅԶԱ բոլոր երկրները հարուստ են բազմաթիվ օգտակար հանածոներով, ընդ որում՝ Ռուսաստանում և Չինաստանում անկա են գործնականում հայտնի բոլոր բնական ռեսուրսները: Գիտահետազոտական և փորձարարական ստորուկտորական աշխատանքների վրա կատարվող ծախսերի գծով այսօր նրանք հետ են մնում համաշխարհային առաջատարներից, բայց սպասվում է, որ առաջիկա մի քանի տարիներին այդ ցուցանիշով ԲՌՅԶԱ երկրները կանցնեն ԵՄ-ին և կմոտենան ԱՄՆ-ի ցուցանիշին: ԲՌՅԶԱ երկրների յուրահատուկ աշխարհագրական դիրքերն ու բնակչության կառուցվածքը հնարավորություն են տալիս դրանց դուրս գալ համաշխարհային շուկա: Այս երկրներում գործում են բազմաթիվ խոշոր մրցունակ ֆիրմաներ, եւ այսօր էլ առաջատար վերազգային կորպորացիաների մեջ ԲՌՅԶԱ երկրների ֆիրմաները բավական լուրջ դիրքեր են զբաղեցնում: Հատկապես՝ մեծ նշանակություն ունեն չինական կորպորացիաները:

Այսպիսով՝ չնայած մի շարք ոլորտներում անկա թերություններին և խնդիրներին, ԲՌՅԶԱ-ն այսօր իրենից ներկայացնում է բավականին լուրջ տնտեսական ներուժ ունեցող երկրների խումբ, որոնք շատ արագ տեմպերով և բավականին հաջող կերպով ձգտում են անցնել տնտեսական զարգացածության նորարարական փուլին: Միույնից, որն ի սկզբանե ձևավորվել էր բավական արհեստական ճանապարհով, դարձավ տնտեսական համագործակցության հաջողված օրինակ: Բացի այդ, ԲՌՅԶԱ երկրներն ի վիճակի են ստեղծել 21-րդ դարի ամենաարդյունավետ մակրոտնտեսական մոդելը, որը կդառնա այլընտրանք արևմտյան մոդելին:

*Ներկայացվել է 28.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ.*